ԿԻԼԻԿԻԱ

ՀԱՆԳԷՍ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱՌՕՂՋԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ — 1874 ՆՈՅԵՄԲԵՐ 30 — ԹԻՒ 6

օրերուն մէջն էր որ գրած է, Ներդաշնաւորութիւն աշխարհիս անուն պատուական գիրքն։ Յաւիտենական լուսութեան, երկնից անհունութեան մէջն է որ սոյն աստղաբաշխն իր վրդովեալ հոգին մոխիկ չընելով, աշխարհային և երկրիս ցաւերը մոռցաւ։ Արդարև չկայ նման որ այնքան գերազանց և գեղեցիկ ըլլայ, ինչպէս հոգւոյն Աշխարհայց անհունութիւնը կառավարող յաւիտենական և անխմանալի առ Աստուած բարձրանալն։

«Երջանիկ և դերերջանիկ է, այն, կսօռայ, որ զերկինս կսուրբ. այնպիսւոյն համար Աստուծոյ գործերն ամեն բանէ գերազանց են, և զանոնք սուրբը մեծ և աննման ուրախութիւն է . . . ութն ամսէ ի վեր է որ լուսոյ առաջին ճառագայթը տեսայ. երեք ամիսէ ի վեր. վերջապէս քիչ օրէ ի վեր Արեգակն և ամենէն սքանչելի գոհացողութիւնն ունեցայ։ Երկինք, պատմեցէք զփառս Աստուծոյ։ Արև, լուսին և աստեղք, վառաւորեցէք զնա։ Երկնային ներդաշնակութիւնք երգեցէք զնա . . .»։

Գնելը ոչ միայն երեւելի էր տաղանդովն, այլ և իր առաքինութեամբն. երբ տէր եղաւ երկնային դիւտից, պարտաւորեալ էր իր խորհրդածութեան բարձրութիւններէն իջնալ մինչև օրական պարէնը ճարելու աստիճանին։

Արդարև կըսէ, Համիլ Ֆլամառիօն, պարկեշտութիւնը

Տ. Մ. Բ. Իւթիւճեան

բարեբաստիճան տաղանդին սովորական ընկերն է : Անոնք որ բան մը գիտեն , ամենայն խոնարհութեամբ կզգան թէ դեռ որչա՛փ բաներ կան որ չեն գիտեր , և այս խորհելով միշտ բնաւ չեն հպարտանար իրենց գիտցածին վրայ . այս մասին Նեվտոն , որ մարդոց ամենէն հռչակաւորն է , կրնայ խիստ ազդու օրինակ ըլլալ :

Նեվտոնի գիւտերն են , քաղաքական հաշիւը , լուսոյ օրէնքները , տիեզերական ձգողական զօրութիւնն որ զարգարեւ գիտնական երեք ամենամեծ գիւտերն են . այսու ամենայնիւ Նեվտոն , այնքան կատարեալէր գովուիլը , զորս չհրատարակեց . այնպէս որ դաղտնաբար իրմէ առին , որոյ առթիւ սոյն գիւտոյ թուականն յայտնի չէ :

Օր մը իր պարտիզին մէջ նստած խորհելու առեն խնձորի մը կտնալը տեսնելուն վրայ իր ուշադրութիւնը լուսնոյ վրայ դառցնելով , հարցուց ինքնիրէն թէ այն ալ երկինքէն վար չկտնար : Ձգողական զօրութիւնը , որ խնձոր մը դէպ ի երկիս կեդրոնը կդըշէ , անոր նմանցուց որ լուսինն ալ պէտք էր գաշել և որով գտաւ թէ լուսինը թենդանօթին զօրութեան դիրքին մէջ կդտնուի , որ 96 մղոն բարձրութենէ նետուելու առեն , կեդրոնական զօրութեան չնորհիւ վար չկտնար : Ձիշտ 1665 թուականին էր որ 260 տարիէն աւելի է , որ այս դէպքը պատահած է , խնձորի ծառի մը տակ , ուր տեղը մինչև այսօր կցուցուցուի Վուլսթորփ անուն քաղաքին մէջ : Ճիշտ քսան տարի յետոյ այս գիւտէն , այսինքն 1685 թուականին էր որ Նիւթըն անուն գիրքը դրեց :

Նեվտոնի ըրած այս մեծ գիւտոյ հետ , ընթերցողաց , իր ապրելու եղանակին վրայ ալ փոքր մ'ինչ դադափար մը տալու համար , հետեւեալներն յառաջ կբերենք որք ոչ միայն խիստ հետազրզռւական են , այլ և կապացուցանեն թէ որչա՛փ ինքզինքը մոռցած , միայն իր աշխատութեանը վրայ կխորհէր ամէն վայրկեան . օր մը հաւկիթ խաշել ուզելով , որ մէկ ձեռքըն ալ ժամացոյցը բռնած էր . փոխանակ հաւկիթին , ժամացոյցը ջուրը նետած կսպասէր որ եփի : Օր մ'ալ բարեկամ ներչն մին կհրաւիրէ միատեղ ճաշելու . հիւրը սեղան կնստի , բայց ժամի մը չափ սպասելչն յետոյ ճարը կհատնի և մինակ կուտէ , Նեվտոն բոլորովին մոռցած էր . բայց սեղան

գալով և տեսնելով որ կերակրոց մեծ մասը կերուեր է, կըսկսին իր դրասենեակը կդառնայ աշխատելու, կերակուրը կեբած ըլլալու համոզմամբ։»

Իսահակ Նէվսոն ծնած տեղն, այնքան տկար և նիհար էր, որոյ ապրելուն վրայ անյոյս էին. այնպէս որ, երբ օր մը երկու կանայք, քաղաք իջան դէղ բերելու, բնաւ չհաճապարեցին տուն դառնալու, մինչև դիւղ երթալու տեղեկին զանի մեռած գտնելու յուսով։ Այսպէս էին նաև Տէքարթ և Վոլթէռ։

Ինքնական կարողութեան միակ կրթութեամբն է որ տաղանդաւոր անձինք կարող կըլլան և եղած են դիտութեան այն համբաւին հասնիլ թէ աշխարհիս բոլոր հարստութիւնք անկարող են վճարել։ Լաբըլաս, դաղղիացի Նէվսոն, գաղղիոյ Հօնքըօռ քաղաքին մօտ Պօհոն-ան-օժ անուն դիւղը բնակող դիւղացի մ'էր։ Ա'Լամպէռ, փողոցէն գտնուած ծնողքն անծանօթ տղայ մ'էր, որ Ֆռեռ տեղն փարիզի Ըէն-Ժան-լը-ռօն անուն եկեղեցիին սանդխտին վրայէն ժողված և մեծցուցած է ապակի ծախողի մը կնոջ։

Տիտերօ, Լանկրը քաղաքը բնակող դանակաւաճառի մը որդի է։

Լակրանժ երկրաչափ, շատ դղուեցաւ իր հօրը տնանկանալէն յետոյ աշխատելու, որ շատ անդամ ըսած է, եթէ հարստութիւնք չըլլար, մաթիմաթիքագետ ըլլալիք չունէր։

Կասսէնտին փիլիսոփայն, ստորին-Ալբեանց աղքատ դորձաւորի մը զաւակն էր։

Ժռան-ըլէն, որոյ վրայ յաճախ խօսողներէն եմք, յայտնի է թէ պարզ և աղքատիկ գրաշար մ'էր, Ժռան-ըլէն, որ օրինակ է մեծահոգութեան, սկզբան, քաղաքակիրթութեան, պարկեշտ դիտնականութեան և բարոյագիտութեան։

Վոլթէռն աշխատասէր քիմիքագետը ծնաւ Քալվատոսի մեծնափոքրիկ գիւղի մը աղքատ խրճիթ մը մէջ. շատ տարիներ Ռուանի մէջ աշխատեցաւ. դեղագործի մը քով իբրև ծառայ, յետոյ փարիզ անցաւ շատ տարի հիւանդանոցն անցուց հիւանդ ըլլալուն։ Սակայն աշխատասէր և հաստատամիտ էր. և ահա այս որպիսութիւններովն է որ գաղղիոյ հասարակապետութեան տեղն, դեղագործական դպրոցին երկրորդա-

կան գասատու, յետոյ Ե.ՊՐԻՒ-ի անդամ, գասատու Գաղղիոյ անուն մեծ դպրոցին, բազմարուեստական վարժարանին և մեկ խօսքով դարուս նոր քիմիաբանութեան հայրերէն մին եղաւ։ Բայց միշտ բարի և պարզ ապրելով։

Տալի մեծ քիմիագետն տղայ հասակէն սկսեալ քիմիական փորձերու հետևելով, առաջին փորձերը տանը խոհարանին ա-նօթներուն մէջ ըրաւ։

Ֆառատէյ, պարզ կաղմարար մ'ըլլալով, կազմած դրքի մը մէջ եղեքտրական յօդուած մը կարդալով, իր վարպետէն հրա-ման առաւ օրը մեկ ժամ դաս մտիկ ընելու երթալ, որով ժա-մանակիս առաջին բնագետներէն մին եղաւ։

Ֆիւվիէ, տղայութենէն սկսեալ ուշիմ ընկեր մ'ըլլալով Բլի-ֆօնի պատկերներն օրինակելու զբաղեցաւ, որով սկսաւ բնա-կան պատմութիւնը սովրիլ, որով եղաւ հռչակաւոր երկրա-բան մը։

Առակս, որ հռչակաւոր է թէ գիտութեամբն և թէ բա-րուքըն, միմիայն իր անդուլ աշխատութեամբն և հաստատա-մտութեամբը, Գաղղիական գիտութեան ամենէն բարձր աս-տիճանին հասաւ։

Գաղղիոյ նախկին պաշտօնեայներէն մին ըսած է թէ, ա-նոնք որ շատ գիշեր չեն գնացած և չոր հաց ուտելու սովո-րած են, նոքա ամենէն աւելի կարող մարդիկ և կենաց ամեն դժուարութեանց դիմացողներ են. ինչ վիճակէ ալ ըլլայ մարդս, իր արժանիքը կըզգկանայ դործունէութենէ, չափա-ւորութենէ, խոհեմութենէ, բարի վարքէ և պարկեշտու-թենէ. այսպիսի որպիսութիւններ ունենալով սկսէ վարէն անշուշտ պիտի բարձրանաս. սկսէ վերէն, եթէ չունիս վերս-յիշեալ որպիսութիւնք, խնայ վար պիտի իջնէս։

Այս բսածնիս տպացուցանելու համար շատ օրինակներ կան որոնցմէ ոմանք յառաջ բերենք. նոյնպէս են նաև Ամպրուազ Բարէ, Ժենները, Տիւբիւյթրէն հռչակաւոր վերաբոյժք։ Ա-սոնցմէ առաջինը աշխատեցաւ վերքերը կարմիր երկաթով և եռացեալ իւղով այրելու վայրենի սովորութիւնը չնչել. երկ-րորդն ամեն ճիգ ու չանք լ դործ դրաւ պատուաստին օ-գուտն ամենուն ընտանեցուներ. իսկ երրորդը Լաէնեվ փա-րիզ մտաւ, միայն ցամաք հաց էը կերակուրն և այն ալ մուրա-

նալով կդանէը, բայց եղաւ Գաղղիոյ վերաբուժաց հայրն։

Քրիսթոֆ Քօլոմպոս փուրթ գաղղ. զաւակ մ'էր։ Տակէը չինուածոց զարդերը ներկող մը։ Ըքուքէնթ Պապը հովիւ։

Ամերիէն Ջ. մակոյկավարի մը, որնոր իր դասերը փողոցները լուսաւորող կաղերուն լոյսով կսերտէր։

Շաքըսբիր մսավաճառի մը որդի։

Պօմարշէ ժամագործի մը։

Ջան Ջաք Ռուսօ, երաժշտական ձայնագրութիւն կօրինակէր մէկ երեսը տասը բարայի։

Ուիլեամ Հէրշէլ ալ համբերութեան և հաստատամտութեան աղուս օրինակ մ'է։ Ամի բանակի մէջ նուագածու մ'էր, մեկէն ի մէկ աստղաբաշխութեան հետեւիլ սկսաւ (գիտնալ պէտք է թէ աստղաբաշխութիւնն և երաժշտութիւնը միշտ յարաբերութիւններ ունին իրարու հետ)։ Հերշէլ հեռադիտ մի ծախու առնել ուզեց, բայց այնքան սուղ էր, որ վերջապէս ինքն իրեն համար հատ մը շինել որոշեց. որնոր ամենադժուար ձեռնարկութիւն մ'էր. բայց աշխատութիւնն ամենակարող և յաղթող է ամենայն դժուարութեանց. ամբողջ տասը տարիներ աշխատեցաւ անխոնջ և վերջապէս յաջողեցաւ, ինչպէս որ Հէրշէլի հեռադիտն աշխարհիս ուրիշ ամեն տեսակ հեռադիտներէն գերազանց է, և իր հնարած հեռադիտովն է որ Ուրանոս մոլորակը գտաւ։

Դիւցազունք աշխատութեան վերաբերեալ օրինակներն, որոնց վրայ ընթերցողին ուշադրութիւնը կհրաւիրենք. կապացուցանեն թէ աշխատութեամբ, մանաւանդ յարատեւ աշխատութեամբ, հաստատամտութեամբ և կամօք, մարդս կրնայ իր նպատակին հասնիլ։

Ինչպէս, բաւ է Ֆրանքլէնն, թէ նորա, որք կկարծեն յաջողիլ առանց աշխատութեան և նեղութեան, նորա թուենաւորիչ են։ Որնոր խիստ իրաւացի և ճշմարիտ է. պէտք է աւելցնել նաեւս թէ աշխատութիւնն, մարդուս երջանկութեան մէկ պայմանն է. և թէ, ջՔաղաքակրթութիւնը, երջանկութիւն է։

Համիլ Ջլամուսիոն կըսէ, թէ, ամեն ոք իր անձին վրայ կրնայ փորձել, թէ, որ և է կարեւոր գործողութիւն մը կատարելէն յետոյ ինչ մեծ ուրախութիւն կզգայ։ Եւ կաւելցնէ թէ, այն գաստիարակութիւնն, որ մենք մեր անձին կու-

տանք , դպրոցական դաստիարակութենեն աւելի օգտակար է : Մեր անձնական աշխատութեամբը կսովրինք անկախութիւն ղորութիւն և կարողութիւն , մեր իմացական կարողութիւնները կընդարձակին . ալ չկայ գիրք և վարպետ մը , որ կարող ըլլայ փոխանակել մեր անձնական , դործունեայ և ինքնակամ կամ յօժարակամ ջանքն :

Ա ՌՈՂՋԱԿԱՆ

ՕԴԻՆ ՅՐՏՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՒՍ ԿԱԶՄՈՒԱԾՔԻՆ ՎՐԱՅ ՈՒՆԵՑԱԾ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Օդին յրտութեան ազդեցութիւնները կտարբերին յրտութեան աստիճաններուն համեմատ ինչպէս երբ յուրտը կազդէ անդիտելաբար և ոչնչնասոցապէս , այն ատեն յօդուածացաւ (եէլ) կոչուած հիւանդութեան ծնունդ կուտայ : Երբ խոնաւ է , հարբուխ կպատճառէ : Իսկ երբ սաստիկ և չանկարծական է , շատ անդամ բորբոքում ունեցող ծանր հիւանդութեանց առիթ կըլլայ , ինչպէս սրտի , թոքերու և աղիքներու :

Ինչպէս որ շատերը սխալմամբ կկարծեն , թէ չնչուած յուրտ օդը , կուրծքի հիւանդութիւն կպատճառէ , բնաւ երբեք : Կուրծքի հիւանդութիւնք , ինչպէս է սպիտակ և այլն , ծնունդ կառնուն ընդհանրապէս , չէ թէ յուրտ օդ չնչելեն , այլ կուրծքին մորթը պաղելեն , որ կըլլայ շատ անդամ և մանաւանդ , քրտինքով եղուած աուեն :

Յուրտը խիստ կազդէ մանաւանդ ոտից վրայ և ծանր հետեւութիւններ կունենայ : Մարդուս ոտաունները պաղելու ատեն , նոյն կողմանց արեան շրջանը կամացնալով , արիւնը դէպի վեր եկնելով , մանաւանդ թոքերուն և ուղեղին մէջ պետք եղածէն աւելի արիւն երթալով , խիստ ծանր հիւանդութեանց շատ անդամ մահառիթ հիւանդութեանց ծնունդ կուտայ : Ինչպէս պեչին ենֆլէնզէ , սպիտակ , հարբուխ , փողացաւ , և այլն :

Ոտքերը պաղեցնելէ մեծ զգայութիւն ընելու են մանաւանդ անոնք , որք ենթակայ արեան հոսման , ինչպէս յաճախ

դթէ , և բերնէ արիւն գալու յատմարութիւն ունեցող անձինք : Այս մասին առողջաբանութեան տուած պատուէրն է , այն հին առածն , որ կըսէ

Որեղը պատ , էլ-ինչ պաղ պահելու է :

Ահա բաղմաթիւ հիւանդութիւններէ , խիստ ծանր հիւանդութիւններէ , շատ անգամ մահաբեր հիւանդութիւններէ ազատ մնալու առողջաբանական խրատ և բժշկական խիստ աղդու , և ազատ դեղմը : Ուրեմն , պահէ ոտքերդ տաք , ինչպէս և ինչ եղանակաւ որ հաճելի է քեղ , բաւական է որ ղգուշանաս , ոտքերդ չպաղեցնելու , մանաւանդ խոնաւ ցուրտէ :

Կիլիկիոյ ընթերցողք մեծապէս կշահին երբ այս համառօտ յօդուածը գոնէ ամիսն անգամ մի կարդան , և կարդալ տան իրենց ընտանեաց , որով ոչ միայն նիւթապէս պիտի շահին , այլ մանաւանդ բարոյապէս . որովհետեւ վստահ կրնան ըլլալ թէ , այն որ առողջաբանական պատը պատ էլ-ինչ պաղ , այս մեծ պատուէրին , զգոյշ է , և չմոռնար զանի գործադրել , այնպիսին ազատ է և պիտի ըլլայ միշտ , կուրծքի , աղիքներու և ուղեղի բազում հիւանդութիւններէ :

Զեղ ջրապատ ընծայել :

Ինչպէս շատերուն յայտնի է , և չգիտցողներն ալ սովրելու են թէ , ջուկը (սրչան օձու) , որ թոյն է , ընդհանրապէս կանաչ գոյն ունեցող նիւթերուն մէջ կգտնուի . ինչպէս մեր տուներուն պատերը զարդարող կանաչ թղթոց , կանաչ գոյն ունեցող կտաւներուն և մետաքսեայ կանաչ հագուստներուն և բաղմաթիւ ուրիշ նիւթոց մէջ :

Սակայն այս կոչուած թոյնն ընդհանրապէս կգտնուի Շեէլի (Գերմանացի մի որ հնարած է այս գոյնը) կանաչին և Շըվէյնֆուրթի (քաղաք , ուր կշինեն այս գոյնը) կանաչին մէջ : Այս երկու կանաչ գոյները կկոչուին նաեւ զմուխդ , հանդային կանաչ , և երբեմն ալ վենետիկի կամ Պրուսալիք կանաչ անուամբ որ բոլորովին սխալ է : Գաղղիոյ մէջ ալ Անգղիական կանաչ կկոչուի : Ինչ անուն ալ ունենայ , կարեւորն է դիտնալ

թէ Շէֆիլտի կանաչին մէջ % ին 55, և Շըվէյնինգուոըթի կանաչին մէջ % ին 58 զառիկ կգտնուի։ Միայն 1860 թուականին, Անգղիոյ մէջ, դուռնաւոր թուղթ չինող գործարանապետ մը մէկ տարուան մէջ երկու ըմպելութիւն և վիճակագրութեամբ կհաստատուի որ միայն Անգղիոյ մէջ տարին 500 են մինչեւ 700 թռչնելաթռ կամ տակառ ալեան գինւոյ կդործածուի։ Ուստի զարմանալի չէ, երբ ըսենք թէ չատ քաղաքաց, ուր վերոյիշեալ թոյնը պարունակող նիւթոց գործածութիւնը ընդհանրացած է, երբեմն իբրեւ տարափոխիկ հիւանդութիւն, բաղմաթիւ մեռնողներ կտեսնուին այս թոյնով թունաւորուելով։

Արուեստական ծաղիկներուն մէջ ալ կգտնուի այս թոյնն, որոնց գործածութիւնն հետզհետէ ընդհանրանալու վրայ է. ինչպէս որ ապացուցած է, Գաղղիոյ մէջ, վէհանուա բժիշկը թէ, այս ծաղիկները չինող գործաւոր աղջիկները խիստ ծանր և մահառիթ հիւանդութեանց ենթակայ են։ Նոյնպէս ալ, Անգղիոյ մէջ, Հառսալ բժիշկն, գրած է արուեստական ծաղիկ չինող գործարան մը պատելէն յետոյ, թէ «տեսայ սենեակի մը մէջ երկու մարդ, ուրոնք կին և երկու տղայ, թըշուառ և ողորմելի վիճակի մը մէջ, ամենքն ալ մի և նոյն հիւանդութեամբ մը կչարչարուէին, կազմուածքնին այնքան տկարացած էր, որ քանի մը օր չէին կարող աշխատիլ։»

Գոյնզգոյն կանաչ չաքարներուն մէջ ալ այս թոյնը կգործածուի. ինչպէս նաև տղայոց համար յատկացեալ խաղալիքներուն մէջ, որք ընդհանրապէս, ինչ որ ձեռնունին անցկին, անմիջապէս կամ միւսոակար, անմիջապէս բերաննին կտանին. Շէֆիլտի և Շըվէյնինգուոըթի կանաչներէն յառաջ եկած միւսոանեըէն զգուշանալու, և զանոնք պարունակող ամեն տեսակ նիւթոց գործածութենէն հեռի կենալու համար, հետեւեալ երկու օրինակները կհրատարակենք։

Կին մը, ծախու առած չոր սալորէն քիչ մը եփելով, կերածին պէս, փսխիլ կսկսի. բայց այս կերածէն հիւանդանալուն վրայ բնաւ չկասկածելով, կրկին կուտէ, և կրկին ենթակայ կըլլայ մի և նոյն հիւանդութեան. որոյ վրայ միացած սալորներն աչքէ անցնելով կտեսնէ, թէ չատերը կանաչ բիծեր ունին. անմիջապէս զանի ծախողին կվազէն, պէտք եղած քննութիւններ ընելու, և անմիջապէս պատճառը կգըտ-

նեն թէ, պողպատաճառը ծախած սալորին վրայ, կանաչ ծառուցադիր մը դրած էր, որոյ վրայի կանաչը, սալորին խոնաւութենէն հալելով, սալորները թունաւորած էր»:

Ժամագործ մը, բերնին մէջ վերք մը ունենալով, բժիշկին կդիմէ:

Բժիշկն ամեն տեսակ հարցումներէ յետոյ, երբ դիշերները աշխատելուն վրայ տեղեկութիւն կառնու թէ, գործածած լուսին սաստկութիւնը մեղմացնելու համար, Շըվէյնֆուրթի կանաչ պարունակող խաւաքարտէ չինուած, լոյսը վարնետող մը կգործածէ, կարող կըլլայ ղանի այն ծանր հիւանդութենէն ազատել, որ ալ կերակուր ուտելու անկարող վիճակին մէջ էնկած էր: Արդարև, լուսին տաքութենէն, գործածած խաւաքարտին կանաչէն «ըլըն օ՞ւռ» շոդիանալով, ղանի ժամադործին բերանն երթալով, հիւանդացուցած էր»:

Ա.յսպիսի հիւանդութեանց ենթակայ եղողներու բազմաթիւ օրինակներ յաճախ տեսնուած են և կտեսնուի, կանաչ թուղթով զարդարեալ սենեակներու մէջ նստող և պառկողներու վրայ:

Ուստի իրաւունք ունինք ըսելու թէ, այն ամեն բաներն, որք կանաչ են, ուտելիք, խմելիք, հագուելիք, զարդարանք, խաղալիք և այլն ասոնց ամենուն ալ գործածութենէն հեռի կենալու է, մանաւանդ մեծ զգուշութիւն ընելու է, տղայոց ձեռքը, կանաչ խաղալիքներ տալէ· որք ընդհանրապէս ձեռուընին անցած բաներնին հնչ որ ալ ըլլան, բերաննին կտանին: Ասոնք մարդուս առողջութեան այնպիսի թշնամիներ են, որք կերպիս իւիք, քօլէռայի և ուրիշ տարափոխիկ ծանր հիւանդութիւններէ աւելի չարդ կբնեն. որովհետև այսպիսիք չէ թէ տարափոխիկ հիւանդութեանց նման երբեմն երբեմն երևան կելլեն, այլ մշտնջենաւոր են, և անդադար իրենց չարդը կբնեն շարունակ և ամեն օր:

Ծնողք, մանաւանդ մայրերը մեծ զգուշութիւն ընելու են, տղայոց ձեռքը կանաչ գոյն ունեցող խաղալիքներ տալու· որոնց շատերուն «անջն» և շատ ուրիշ տեսակ հիւանդութիւնները այս առթիւ ծնունդ առած են, կառնուն և պիտի առնեն միշտ, քանի որ մեկ կողմէն ծնողք, միւս կողմանէ կառավարութիւնը չեն արդիլեր, «ըլըն օ՞ւռ» պարունակող շեհելի և շըվէյնֆուրթի կանաչները դործածելու. . . :

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ե·

Ա· Քանի որ նախորդ խօսակցութեամբ սովրեցանք ակռայներու Անդամալնութիւնն և բնաշնութիւնն, խնդրեմ խօսիք այս անգամ ալ, ակռայներուն վերաբերեալ Առողջաբանութեան վրայ, ինչպէս որ խօստացաք։

Բ· Արդարև, անոնք որ Առողջութիւննին անվնաս պահել, մանաւանդ մարսողութեան պաշտօնին չխանգարիլը և հետևաբար ստամոքսի շատ տեսակ հիւանդութիւններէ ազատ մնալ կուզեն, պարտաւոր են, իրենց ակռայները միշտ առողջ պահել։

Ա· Ի՞նչ ըսել կուզէք ակռայներն առողջ պահել ըսելով։

Բ· Ակռայներն առողջ պահել ըսելով, չէ թէ իրրև զարդարանք, զանոնք ճերմակ պահելը հասկնալու է միայն· այլ մեծ զգուշութիւն ընելու է զանոնք փտտեցնող ամեն պատճառներէ։

Քի ինչպէս խօսեցանք նախորդ խօսակցութեամբ թէ, մարդուս ակռայներն ոչ միայն զարդ են դեղեցկութեան, այլ և խիստ կարեւոր և անհրաժեշտ դործիք, մարդուս մարսողական պաշտօնին։

Ա· Որոնք են մարդուս ակռայները փտտեցնող պատճառներըն։

Բ· Բազմաթիւ են, բայց ամենէն գլխաւորն, ըսենք առաջինն է, հետևեալն։

Ակռայներն ամեն կերակուր ուտելէ վերջը չլուանալն։

Ա· Ինչո՞ւ համար·

Բ· Որովհետև, կերակուր ուտելու ատեն, ակռայներուն մէջ տեղերը պարապ մնացած տեղը, կերակրոց բսրատանք մնալով, կՀոտին· անոնց հոտելէն զանազան տեսակ թունաւոր կազեր ծնունդ կառնուն, որոնցմով ակռաները կվտտին։

Ա· Ի՞նչ ընելու է ուրեմն·

Բ· Դարմանն է ելլօք պէպրին և չըէ· այն է ակռայներըդ լաւալ ամեն կե-

բոլոբէ ակոյ պաղ ջուր։ Ինչպէս Գաղղիացիք սովորութիւն ունին դինիին վերջին գաւաթով բերաննին լուանալ։

Ասոր համար, ծնողք սովորութիւն ընել տալու են իրենց զաւակաց, բերաննին առաւուն եղած ժամանակնին և երեկոյին անկողին մտնելու առեննին, պաղ ջրով լուանալ. որով քանի մը ծծնան, ամեն կերակուրէ յետոյ ակռայներնին մաքուր պահելու կսովորին։

Կան նաև ուրիշ ղդուշութիւններ, ինչպէս ղդոյշ կենալ խիստ տաք և չափազանց պաղ խմելիքներէ և ուտելիքէ և այլն, բայց ըստ մեզ, ղդուշութեան ամենեն գլխաւորն և առաջինն է ակռայները մաքուր պահել, որ կըլլայ, Ա. ինչպէս ըսինք զանոնք ամեն կերակուրէ յետոյ լուալ. և Բ. երբ ակռայները դեղնել կսկսին, կամ անոնցմէ մին կը ցաւի, անմիջապէս վարպետ ատամնաբոյժի մը դիմել, որ նա միայն դիտէ, անմիջապէս պէտք եղածն ի գործ դնել ծանր հետևութիւններէ աղատ մնալու։

Այս առթիւ ուրախ ենք, որ մեր Աղդին մէջն ալ այսօր համբաւաւոր և ընտիր ատամնաբոյժներ կը գտնուին, ինչպէս են Տօք. Թաչատուրեան (որ կգտնուի Պահճէ–քաբուլի ճատատէն որ ամենէն փորձառուն է, և Հայ ատամնաբոյժաց առաջինն, իսկ նորերուն մէջ,) Տօք. Ճիվանեան ի Պէշիկթաշ, Տօք. Ներկարարեան (կամուրջին գլուխը) և ուրիշներ։ Ասոնք կյիշենք դիտմամբ, որովհետև յաճախ կտեսնենք չատ ընտանիքներ, մանաւանդ պանդուխտ ազգայիններ, որք փոխանակ վերոյիշեալ վարպետ և ընտիր Հայազդի ատամնաբուժներու դիմելու, խել մը խաբեբայ օտարականաց կը դիմեն, որք ոչ միայն աւելի դրամնին կառնուն, այլ և առիթ կըլլան ակռայներնուն բոլորովին կորնցնելնուն։ Այս առթիւ այս մեկ քանի տողերը կհրատարակենք, չէ թէ ուրիշ դիտմամբ, այլ միայն նպատակնիս է, թէ Ա. փառք է, որ այսօր, կ. Պոլսոյ, Մայրաքաղաքիս մէջ, ինչպէս ընտիր բժիշկներ, նոյնպէս ալ ընտիր ատամնաբոյժներ ունինք, զորոնք թէ անուամբն և թէ ո՛ւր գտնուելնին ծանուցինք ի դիւրութիւն ընթերցողաց, Բ. ղդուշացնել մեր ազգայինքն այն ամեն օտար խաբեբայ ատամնաբոյժներէն . . . ։

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

ՀԵՌԱԳԻՐ, ՇՓԵՂԱԾ Ի ՇՓԵՂԱԾ

ՀԵՌԱԳԻՐ. ամենէն վերջին վիճակագրութեամբ մը կը սովրինք, թէ հեռագրի գիւտէն սկսեալ մինչև այսօր բոլոր աշխարհիս մէջ չինուած հեռագրական գծոց երկայնութիւնն է 77000 աշխարհագրական մղոն։ 24 ժամուան մէջ, աշխարհիս ամեն կողմ դանուած շոգեկառքներու միջոցաւ 4,000,000 մարդ կճանապարհորդէ։ 3,300,000 նամակաց երթևեկութիւն կըլլայ տարին, որ ըսել է օրն 9,400,000 նամակ։ Միայն Գաղղիա 30515 հաղամեթր երկայնութեան երկաթուղի ունի։

Աշխարհիս բոլոր ծովերուն վրայ երթևեկութիւն ընող շոգենաւուց մէջ ամենէն մեծ շոգենաւներուն թիւն է միայն վեց, որք են

1.— Կ-էյն-Էմփըռ, որ շինած է Լինրնանափոլ Ռեկիրթֆ Փոսթըէյշըն Քոմփընի անուն ընկերութիւնն. ունի 674 ոտք երկայնութիւն և 77 ոտք լայնութիւն։

2.— Սիթի օֆ Բէյրն, որ կվերաբերի Բոսթֆէյ Տալ Սիթիզնէբ ընկերութեան. ունի 423 ոտք երկայնութիւն և 48 ոտք լայնութիւն. կչափէ 6000 տակառակշիռ։

3.— Լէյն-ոյ. որ է Բոսթֆէյ Սիթի Նավիկէյշըն ընկերութեան. կչափէ 4820 տակառակշիռ. ունի 460 ոտք երկայնութիւն, 45 ոտք լայնութիւն։

4.— Պէնսիլ. կվերաբերի Վոյն Սիթիին ընկերութեան, կը չափէ 4700 տակառակշիռ, ունի 45 ոտք երկայնութիւն, 45 ոտք լայնութիւն։

5.— Սիթի օֆ Ռիչմընտ, որ շինած է Ինգլիզ. կչափէ 4600 տակառակշիռ, $453\frac{1}{2}$ ոտք երկայնութիւն և 48 ոտք լայնութիւն։

6.— Պընիա. որ կվերաբերի Փէնսա ընկերութեան, կչափէ 4500 տակառակշիռ, ունի 425 ոտք երկայնութիւն և $42\frac{1}{2}$ ոտք լայնութիւն։

1838 թուականին էր որ առաջին անգամ շոգենաւով ճանապարհորդութիւնն սկսաւ Անգղիայէն Ամերիկայ. և Պրիզթօլէն մինչև Նիու-Եօրք, տասնչորս օրուան մէջ գնաց։ Իսկ

այսօր 1000 էն աւելի չոգենաւուց երթեւեկութիւնը կըլլայ։

Միայն Փիւնաւ անուն ընկերութիւնը 148 չոգենաւներ ունի, որոնց 111ը միշտ երթեւեկութեան մէջ է։

1818 Թուականին, կլաս.քովցի երկու հարուստներ, Ձէյմս և Ջօռճ Պռիւնն ընկերացան որ Թուականին Ֆախու առին վեց առագաստաւոր նաւեր կլաս.քովէն Լիվըրբուլ և երէք ալ չոգենաւ կլաս.քովէն Պէլֆասթ ճանապարհորդելու։ 1824 Թուականին, Լիվըրբուլցի, Հիւկ Մաթի, անուն անձն ալ իրենց ընկերը առին։ 1830 Թուականին, Լիվըրբուլ, Մաքիվեր անուն ընկերութեան հետ միացան. և 1830 Թուականին, Անգղիոյ կառավարութեան հետ պայմանադրութիւն ըրին։

Միայն 1872 Թուականին, սոյն ընկերութիւնը 274 ճանբորդութիւն ըրած է, առնելով 72611 ճանապարհորդ։

Անգղիա կպարծի իրաւամբ ծովային զօրութեամբը ղի վերջին վիճակագրութեամբ կսովրինք, Թէ բոլոր ծովերու վրայ երթեւեկող առագաստաւոր նաւերուն $^1/_3$ և չոգենաւներուն ալ $^2/_3$ը Անգղիոյ կվերաբերի. իսկ Անգղիոյ կյաջորդէ Ամերիկոյ միացեալ–նահանգք. ինչպէս Անգղիա ունի 19182 վաճառականութեան յատկացեալ նաւեր, իսկ միացեալ–նահանգք 7097, չափելով 2282120 տակառակշիռ, մինչ Անգղիա 5,366,327 տակառակշռի որ կչափէ Անգղիա։ Անգղիա ունիր 2538 չոգենաւ, 2,382,145 տակառակշռի չափով. իսկ Միացեալ–նահանգք ունին 420 չոգենաւ միայն, 401034 տակառակշիռ չափով։

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԻՌՄԱՆԻԱ.

Պիռմանիա, Ասիոյ վիճակներէն մին է, որ կդտնուի, Հնդկաստանի և Չինաստանի թերակղզւոյն մէջ. իր տարածութիւնն է 500,000 քառակուսի հաղարամէթր, և ունի 4,000,000 բնակիչք։ Խիստ հարուստ տէրութիւն մ'է. գժբաղդաբար իր քաղաքական կազմութեամբն, և իր նախապաշարութիւններովը դադարական վիճակի մէջ մնացած է։

Պիռմանիա ունի 8000 քաղաքք և գիւղք։

Պիւմանցիք սովորութիւն ունին միշտ բազմութեամբ բնակիլ. աւելի Զինացւոց կը նմանին կազմուածքով. հասակնին միջակ, բայց զօրաւոր և դործունեայ. մազերնին երկայն, սև ու թանձր: Հերաթափ դէղ դործածելնուն դէմքերնին միշտ երիտասարդ կերեւի:

Կանայք ընդհանրապէս դեր են. և հնդիկ կնոջմէ աւելի ճերմակ, բայց աւելի պակաս փափկութիւն ունին:

Զգեստնին Զինացւոցը կնմանի. նեղ և երկայն, ընդհանրապէս խաւիղ և մետաքսէ շինուած է: Կանայք խիստ երկայն շապիկ կդործածեն. և աւելի հարուստները մէջքերնին մետաքսէ դոտի մը կկապեն: Այր և կին ականջներնին սեռով կներկեն. միայն էրիկմարդիկ աղատ են օղ դործածել:

Դործունեայ, համարձակ դործունեայ, հետադրդիր, անհամբեր և բարկասիրտ են. միանդամայն բռնաւոր և մարդասէր են: Ողեւորութիւնը մեծ և առաջին առաքինութիւններն է: 4,000,000 Պիւմանցիներուն մէջ մէկ մուրացկան մը դտնել անկարելի է. երբ որ և է մէկն անկարող ըլլայ աշխատիլ որ և է առթիւ, զանի կխնամեն ամէն կերպիւ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՂԱՆԴԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

. . . Խմբագիրը Կիլիկիոյ Հանդիսի.

Քանի որ Կիլիկիոյ Առողջաբանական թերթիդ մէջ յաճախ կկարդանք տնտեսական յօդուածները, և այս օրերս Եւրոպական զանազան լրագրոց մէջ, կաղանդի և Ս. Ծննդեան տօներու առթիւ, տնտեսական մէկ քանի հրատարակութիւններ կարդալով, յարմար դատեցայ, նոցա համառօտութիւնն ձեզ ու ղարկել Կիլիկիոյ մէջ հրատարակելու:

« Ինչպէս Եւրոպացի ամեն քրիստոնեայ ազդաց, նոյնպէս և մեր մէջ սովորութիւն է, կաղանդի և Ծննդեան տօներու առթիւ, բարեկամ բարեկամի և ազգական ազգականի շնորհաւորութեան երթալ. բաւական տարիներէ ի վեր Եւրոպական ազգաց մէջ սովորութիւն եղած է, « Շնորհաւորական

ընկերութիւն » անուն ընկերութիւններ կազմել, որոնց միակ նպատակն է, «մոնոպոլիան»:

Այսպիսի ընկերութեանց անդամ եղողն, աղատ կըլլայ կազանդի և ծննդեան առթիւ չնորհաւորութեան չպատիվ իր բարեկամաց և ազգականաց, որով ոչ միայն երթեւեկութեան ծախքը կշահի, այլ ինքն, այսպիսի չնորհաւորութեան չերթալով, և միանգամայն դինքը չնորհաւորելու գալիք բարեկամաց և ազգականաց համար ընելիք ծախքն, որոնց համար պարտաւորեալ է, հիւր ընդունելու, մասնաւոր սենեակ մը յատկացնել յարմար կարասիքներով և զանի միշտ դոց պահել նոցա, այսինքն հիւրոց համար, ասկէ ի զատ, անուշեղէնի, սուրճի, չայի և կնի. ընելիք ծախքէն աղատ կըլլայ. մանաւանդ ընտանեաց հանդստութիւնն ալ վրդոված չըլլար. զի այսպիսի օրերուատեն երթեւեկողաց թիւը չափազանց ըլլալով, պէտք եղածին չափ մատրմական և բարեկամական տեսութեան ժամանակ չմնար:

Այսպիսի ընկերութեանց անդամ եղող ընկերն, այսպիսի ծախքերէ ազատ ըլլալով, և նպատակին օգտակար ընելու համար չափ մը տուրք սահմանած են, ընկերութեան անդամակցաց նիւթական վիճակին համեմատ:

Ընկեր եղողն, տարին մէկ անդամ, 40 փղ էն սկսեալ մինչև 100 ղրչ տուրք մը վճարել ստիպեալ է այսպիսի չնորհաւորութեանց առթիւ ընելիք ծախքերէն և ունենալիք անհանգըստութենէն ազատ մնալու համար:

Ըսինք թէ տարեկան տուրքը 40 փարայէն սկսելով մինչև 100 ղրչ տուող կայ. ասի չէ թէ մի և նոյն ընկերութեան մէջ զանազան տեսակ տուրք վճարող կայ, այլ մի և նոյն ընկերութեան աւէն անդամը, հաւասարապէս մի և նոյն տուրքը կվճարեն. որովհետև այսպիսի ընկերութիւնները կհաստատուին դործաւոր դասէ սկսեալ մինչև բարձրաստիճան հարուստ ընտանեաց մէջ. որով տվրեցնել կուզենք թէ ամեն մարդ իր նիւթական վիճակին համաձայն ընկերութեան կդրուի, որպէս զի դժուարութիւն չունենայ որոշեալ տուրքը վճարելու. այս եղանակաւ, այսօր այսպիսի ընկերութիւններ այնքան ընդհանրացած են, որ դրեթէ, չնորհաւորութեան երթեւեկութիւնք դադրածի նման են:

կան ընկերութիւններ որ 100000 էն աւելի անդամներ ունին :

Այսպիսի ընկերութեանց առթիւ ժողոված դումարն, որ տարին մէկ անգամ կըլլայ, միշտ բարեգործական գործողութեանց համար կծախսուի :

Ամեն ընկերութիւն, իր դրամագլխին մէկ քառորդ մասը կպահէ, սոյն դումարին տոկոսը կբաներնէ, այնպէս որ տարուէ տարի մեծնալու վրայ է · այս պահեստի դումարին միայն տարեկան եկամուտը կգործածեն, որը և աղքատ օրիորդներ ամուսնացնելու :

Իսկ ժողոված դումարին ծնացորդ $^3/_4$ մասն ամբողջ կվատնեն ամեն տարի կաղանդի և Ծնունդի տօներու առթիւ որը և աղքատ, աղջիկ և մանչ տղայոց հագուստներ չինելու : Ահա այս է, սոյն ընկերութեանց նպատակը · պնոպհոռ-ինէան և բոլեքոռ-ինէան :

Այսպիսի ընկերութեանց ըրած բարեգործութիւնները կարդալով նպատակնիս չէ թէ միայն, ընթերցողաց պատմութիւն մ'ընել է, այլ միանգամայն կփափաքինք որ մեր մէջն ալ այսպիսի ընկերութեանց հիմնարկութիւնները ըլլալ սկսուի, որոց օգտին վրայ խօսիլ աւելորդ կհամարիմք :

Արդէն ուրախ ենք, թէ Պօլսոյ մէջ այսպիսի ընկերութիւններ ծնունդ առնել սկսած է, ըերայ բնակող Եւրոպացիներուն մէջ, ղորս կարդալու բաղդն և ուրախութիւնն ունեցանք այս շաբթու, Քոռէի փ'Օռիան անուն գաղղիարէն լրագրոյն մէջ :

Ցուսանք որ մեր աղգայինքն ալ ասոնց կհետեւին, ոչ միայն յօդուտ իրենց քսակին և հանգստութեան, այլ և ի մխիթարութիւն որը, անտէր և աղքատ թշուառներու(1) :

* * *

Դ Ր Ա Մ

Կիլիկիոյ նախորդ թիւերով խօսեցանք Մալթուսի և իր սկզբանը վրայ · որ էր հաստատօրէն, « երբ ողորմութիւնն ընտ-

(1) Եթէ աւելի մանրամասն տեղեկութիւններ առնել ուղղղ գրասնուի, այսպիսի ընկերութիւն մը կազմելու և մեր մէջ, կրնայ մեզ դիմելով, նամակատիրոջ հետ տեսնուիլ : Ը. Յ.

բանօք չըլլայ, փոխանակ աղէկութեան դէշութեան աղբիւր կըլլայ, և հետևաբար աղքատութիւնն և թշուառութիւնը մեղմացնելու և կամ անհետացնելու, աւելի ուժոյգնելու և արմատացնելու աղբիւր եղած կըլլայ։»

Ոյն յօդուածոյս առթիւ խօստացած էինք կ. Պօլսոյ Ազգ. Հիւանդանոցի վրայ խօսիլ։ զոր պիտի ընեմք, նախ և առաջ դէպքին վրայ խօսելէն յետոյ։

Այս նիւթին վրայ աւելի օգտակար խօսած ըլլալու համար, մեզ առաջնորդ պիտի բռնեմք, ժամանակիս առաջին տնտեսագէտ, փարիզու ուսումնական դիտութեանց Համալսարանի վօլվօվըքի դպատուին, դրամի վրայ խօսած մէկ պատուական ճառը, զոր 1866 թուականին փարիզ եղած ժամանակնիս ականջալուր ըլլալու բաղդն ունեցած եմք։

«Որոշած եմ կըսէ, վօլվօվըքի, այսօր, Ձեր ամենուն ծանօթ նիւթոյ վրայ խօսիլ, ըսել կուզեմ դրամին, ոսկիին և արծաթին վրայ, որք աշխարհիս հարստութիւնը կկազմեն։ Այսու ամենայնիւ, պէտք չէ կարծել թէ նոյն ինքն հարստութիւնը կկազմեն, այլ և հարստութեան կարծուածէն աւելի պակաս, միայն մէկ մասը։

Արդարև ամեն տնտեսագէտ, առանձին և մասնաւոր կարծիք յայտնած է. շատերը զանի, դրամը, բամբասած են. այսու ամենայնիւ մեկդի թողլով, այս նիւթին վրայ ի սկզբանէ ի վեր դրուած և յայտնուած կարծիքներն, անուրանալի է, թէ ոսկին և արծաթը, մարդիկ առ միմեանս իրար միացնելու, ամենէն գօրաւոր, ամենէն բերրի և ամենակարող գործիքն են, միանգամայն ամենահաստատ և օրինաւոր շարժառիթքն են. որոնցմով ամեն մարդու աչխատութիւնն, իր արդար և օրինաւոր փոխարինութիւնը կգտնէ։

Շատերու համար, ոսկի և արծաթ ունենալն, իրենց կենաց դերագոյն նպատակն է, այնպիսիք համոզուած են թէ տգբա են հիմունք ճշմարիտ հարստութեան։ Բօլ Լուի Քուռիէ ըսած է, «Աստուած պահէ զմեզ չարչն և այլափոխէն»։

Ոսկին և արծաթն, որոնց քանակութիւնը սահմանեալ է, հարստութեան հիմունքը նկատելով երկու թշուառ ծերութեանց առաջնորդուած են, վաճառականական դրութեան և պատերազմի, հայր թղթադրամի։

Մարդիկ և ժողովուրդք բնականաբար իրարու արիւն խըմելու պիտի ելլէին, իրարմէ յափշտակելու այս նիւթն, ոսկին և արծաթն, որք են մայր ամեն տեսակ ապրանաց։

Պատերազմը բնաւ չպիտի անհետանայ այս աշխարհէս, շահուց և կրից մաքառումը պիտի յարատևէ որչափ մարդկային սեռը։ Միշտ ծախել բնաւ ծախու չառնել, այս էր վաճառականութեան սկզբունքն, և այս ալ, աշխարհիս բոլոր ոսկին և արծաթն իրեն քաշելու։

Տխուր և տարօրինակ սխալանք։ Ոսկին և արծաթը բնականաբար հոն կժողովուին, ուր կդանեն արհեստ և գործունէութիւն։ Որքան որ վաճառականութիւնը մարդոց մէջ կը բազմանայ, ապրանքներն ընդհանրապէս հոն կժողովուին, ուր աղէկ կծախուին և կփոխարինուին։ Ոսկին և արծաթն, սոյն երկու թանկագին մետաղները տեսակ մը ապրանք են, բայց այնպիսի ապրանք մը որ մանաւոր և առանձին որպիսութիւն մ՚ունի։ Բայց միւս ամեն տեսակ ապրանքներուն նման, կամ ծառայութեան կամ ապրանքի հետ կփոխարինուին։ Սոյն երկու թանկագին մետաղներն ընդհանրապէս հոն կգաչուին ուր աւելի ապրանք կդանեն փոխանակելու կամ աւելի իմացական աշխատութեանց ծառայութիւններ։ Երբ տեղ մը, ոսկիին և արծաթին առատութիւնն հարստութեան պղբիւր կնկատէին, սխալ էր այս կարծիքն, որովհետև չէթէ պղբիւր է հարստութեան, այլ հետևութիւն։

Հարստութեան բնութեան վրայ եղած այս սխալ կարծիքն առիթ եղած է ուրիշ սխալի մը, որն որ դժբաղդաբար ոչ միայն անցեալին մէջ եղած է, այլ մինչև այսօր կշարունակէ։ Եթէ ոսկին և արծաթը նոյն լինքն հարստութիւնը կկազմեն, ինչու համար մարդիկ կարող չեն ըլլար կոր, զանազան միջոցներով, անոնց տեղ ուրիշ նիւթեր դտնել։ Եթէ կարելի ըլլար առանց դժուարութեան այս գաղտնիքը դտնել առատութիւն պիտի ունենայինք, և հետեւաբար ամեն ոք իր փափաքը լեցնել կարող պիտի ըլլար։ Պանքային թուղթն, որ գիւտով մէկ հրաշալիքն է, որ փոխանակ ոսկիի կգործածուի, այնպես կարծուած է թէ այս մեծ գաղտնիքը գտած է։ Արդարև մարդս կարող է ուղածին չափ բազմապատկել, տեսակ տեսակ զարդերով և դոյներով դեղեցիկ թուղթեր չի-

նել, և խիստ քիչ ծախքով, մեծ դումարներ ունենալ: Եւ այս եղանակաւ անմիջապէս ոսկիին և արծաթին բռնաւորութենէն կազատուի. և ինչ եղանակաւ որ մարդս ուզածին չափ թղթա դրամ կրնայ տպել, ուզածին չափ ալ հարուստ կրնայ ըլլալ, և հետեւաբար ամէն մարդ:

Արդարև խիստ դիւրագիւղ է այս, դժբաղդաբար միայն երեւակայութիւն է: Կնմանի միջին դարու առասպելքով, որ ըստ քմայ ծառոց պտուղներն ոսկիի կվերածէին. ամեն ոք կվազէր ղանոնք ժողուելու, ոչ բայց թէ ոսկի էր ձեռքն անցածն, այլ չոր տերև:

Հարստութեան սկզբան և հետեւաբար թանկագին մետաղաց պաշտօնին վրայ եղած այս սխալ դաղափարն առիթ եղած է ժողովրդոց առ միմեանս մշտնջենաւոր թշնամութեան: Ծնունդ տուած է մաքսական զանազան օրինաց, որք միմեանց առ միմեանս հետ ունեցած յարաբերութիւնները աւելցնելու, մեկզմեկիկ կհեռացնեն:

Ծնունդ տուած է նաև թղթադրամի կարծեցեալ հարստութեան, որպէս թէ մարդս կարող է ուզած ատեն և ուզածին չափ հարուստ ըլլալ փոքր մը ծախքով, առանց դժբաղդութեան և առանց աշխատանքի:

Արդարև ոսկին և արծաթը փոխանակութիւնները դիւրացընելով և բազմապատկելով, արդիւնքը կառաւտացնեն. միանգամայն ձեռք բերուած արդեանց փոխարինութիւնը կորոշեն: Մարդիկ առ միմեանս կմօտեցնեն. ինչպէս ը կըսէ Պուակլէպէր թէ ոսկին և արծաթն են կապ վաճառականութեան:

Ոչ ոք կրնայ ուրանալ սոյն երկու թանկագին մետաղաց կատարած մեծ պաշտօնը: Դրամը կորոշէ բոլոր արժէքներն, հարստութեան ամեն տեսակ կատորակներն ընդհանուր անուան մը տակ կմիաւորէ, ամեն տեսակ ապրանքներն և ծառայութիւններն իրարու հետ բաղդատելու կյարմարցնէ, կարող կընէ զանոնք փոխարինել և անոնց յարդն ու արժանիքն որոշել: Դրամն ամեն տեսակ բաներուն ընդհանուր որոշիչն է, և ասով ամեն բան, աշխատութիւն, ապրանք և ծառայութիւն իր փոխարինութիւնը կստանայ. դրամը կծառայէ արժէքը չափելու, ինչպէս կանդումնը կծառայէ երկայնութիւնն, և հոլման ալ կծառայէ ծանրութիւնը չափելու:

Ամեն մեծութիւն, մի և նոյն տեսակ մեծութեամբ մը կը չափուի. երբ կուզես որ և է նիւթոյ մը չափը դանել, որչեալ չափովմը անոր որքանութիւնը կդանես. երբ կուզես զորօրինակ չամի մը չաքար ծախու առնել, դրամին չափը կյայտնես մեկ կամ կէս հօխայ կամ 100 տրամ ըսելով: Նոյնպէս երբ հեռաւորութիւն մը հասկնալ ուզենք, անվիճապէս կանդունը միտքերնիս կուգայ:

Բայսնի է թէ ապրանաց և ծառայութեանց տեսակն անթիւ է. ուստի զանոնք բաղդատելի ընելու համար, պէտք է այնպիսի նիւթ մը դանել, որոյ ընդունելութիւնը տիեզերական ըլլայ. այս է ահա դրամին պաշտօնն. ապրանք մ'է, որ միւս ամէն տեսակ ապրանքները կչափէ, կարելի կընէ մարդիկ առմիմեանս մտերցնել, մէկզմէկ հասկնալ. դրամն արդարև, այնպիսի չափ մ'է, որ արդարութեան օրինաց համաձայն մարդոց ամեն տեսակ աշխատութիւնները կվոխարինէ. եթէ մարդիկ և ժողովուրդք լեզուներով, քաղաքներով, ծուռով ցամաքով, բարւոք, սովորութեամբ և նախապաշարուս ներով իրարմէ զատուած, բաժնուած են, դրամով միացած են. զի այս մի է ամեն տեղ և միևնոյն արժէքն ունի ամեն մարդու համար, ուր որ ալ ընակի, ինչ ազգէ և կրօնքէ ալ ըլլայ:

Արդարև խիստ կարևոր է, մանաւանդ անոնց որք կաշխատին, անոնց, որոնց օրական աշխատութիւնն, օրինաւոր վարձք մի ալիտի ունենայ. նոյն վարձքը, նոյն փոխարինութիւնն ըլլայ որչեալ միօրինակ և հաստատ. ահա այս ալ կարելի է միմիայն դրամով:

Այսպէս, դրամի դաղափարը, թէ ըլլայ ուղիլ կամ սխալ, ամենուն ընտանի եղած է, ուստի կարևոր է որ այս ըմբռնումն ըլլայ որդար որովհետև սխալի մը հետևութիւնները խիստ ծանր կըլլային, հակառակ դրամի նպատակին, աշխատութեամբ վաստակեալ հարստութեան այն հզօր դործնքն:

Եթէ նախնի դարուց պատմութիւնն աչքէ անցնենք, կը դանենք թէ դրամապաշտութիւնը միշտ կռիւրեր և եթէ չենք սխալիր ներկայ ժամանակէս աւելի:

Ինչպէս աղքատ քաղաքի մը նկարագրութիւնն ընել տալու համար, Բռէպկյեօն՝ Ռատամիսթի ըսել կուտայ թէ,

Ի՞նչ թշուառ քաղաք է այս, որ փոխանակ ոսկիի, միայն երկաթ և դինուոր ունի։

Կտեսնենք որ Քռէպլիկեօն որչափ կսիրէ եղեր ոսկին, և որչափ տգէտ է եղեր Միանգամայն, դի երկաթին ալ այսօր ոսկիին նման յարգ և արժէք ունի. և դինուորք լսեատ օգտակար գործիքներ են, երբ աղգայ անկախութիւնն և աղքատութիւնը պաշտպանելու ծառայուին։

Նոյնպէս, Արիսթօֆան, որ կկոչուի նաև յոյն Մօլիէռ, բոլորը դրամներն ոսկիի և հարստութեան վրայ է։

Արդէն նոյն դարուց մէջ ճշմարտութեան մօտենալ սկըսուած էր. թէ ոսկին և արժաթը պարզապէս հարստութեան կառավնորդեն, որ կկայանայ ապրանաց առատութեան և ընտիր բաշխման մէջ։ Կնմանին այն ճանապարհին որ կծառայէ աւելի սերմանելու, որ հունտերն աւելի դիւրութեամբ ամբարները ժողովելէ յետոյ գանոնք աղօրին փոխադրելու, ալիւրի վերածելու համար։ Առանց աղէկ ճանապարհի, ոչ առատ ցորեն և ոչ առատ ալիւր ունենալ կարելի է, և հետեւաբար քիչ հայ։

Անցնելով նախնի դարերն և մօտենալով միջին դարուց վերջերը, տեսնենք թէ ինչ դաղափար կտիրէր ոսկիին և արծաթին վրայ, և որոյ համար բազմաթիւ օրինակներէն միայն հետեւեալ պատմութիւնը բաւական կհամարինք։

Կարոլոս Քօլօմպօս՝ Եղիսաբեթ թագուհւոյն և Քաստիլիի Ֆերտինան թագաւորին կգրէր թէ,

« Ոսկին ընտիր բան մ'է. մարդս ոսկիով դանձեր կյօրինէ, ոսկիով մարդս կարող է ամեն բան ընել այս աշխարհիս մէջ. մինչև անդամ հոգիներն արքայութիւն տանիլ։ »

Ուստի կրնանք ամենայն համարձակութեամբ ըսել թէ դրամագլուխն ոչ միայն մեր դարուն հիւանդութիւնն է, այլ էր նաև և սկզբանէ աշխարհիս, ամեն անցեալ դարուց։

Ոսկիին և արծաթին վրայ, յայտնի եղած է թէ ամեն դար իր կարծիքն ունեցած է. ոմանք զանոնք ոչինչ և ոմանք ալ ամենակարող համարած են։

Արդարև ոսկին, ամեն բան չէ, այսու ամենայնիւ ցնորք մ'ալ չէ։ Ոսկին, արդարև, մեծ պաշտօն ունի ընկերութեանց մէջ. ոսկին՝ հարստութեան ամենակարող մեկ գործիքն է.

միանգամայն արդարութեան. անտարակոյս ապրանքներու և հարստութեանց բաշխման մէկ մեքենայն է. բայց ամենէն բերրի և ամենաշքեղ մեքենայն է:

Իսկ ընդհակառակն, առաջներն, ամենուն կարծիքն ու դաղափարն էր, թէ մարդս ամեն ջոկ ընելու է, աւելի ոսկիի և արծաթի տէր ըլլալ. այս էր նոյն դարուց օրէնսգիտաց նպատակն. որն որ սխալէ, դի դրամն ուրիշ բան չէ, այլ միջոց, որով աշխատութեան բաժանումը կկատարի, և ամեն տեսակ ծառայութեանց ճշմարիտ և օրինաւոր վարձատրութիւնը:

Վաճառականութեան ամեն տեսակ դործողութիւնները դիւրութեամբ կատարուելու մէկ սահման մը, չափ մը քանակութեամբ թանկագին մետաղ ունենալը կարեւոր և անհրաժեշտ է. ինչպէս յարմար դիրութիւն մը առողջութեան նշան է:

Ի՞նչ բանի օգտակար է՛ ոսկին: ինչ բանի ծառայած է աշխարհիս մէջ: Ոսկին ծառայած է և կծառայէ, մարդիկ առ միմեանս ունեցած նիւթական յարաբերութեանց իրերու ճշմարիտ դործիք:

Շատեր աշխատած են ամեն բան, ապրանք և ծառայութիւն, իրերու դրամ դործածել, որն որ սխալ ըլլալուն, այսօր մոռցուած է: Իրաւ է որ ամեն ապրանք, իրերու դրամ կընայ դործածուիլ. ինչպէս էր նախնի դարուց մէջ. կընայ սովրիլ միայն թէ աղէկ կամ գէշ դրամ է. կրնայ իրերու դրամ, ապրանքի կամ ծառայութեան մը օրինաւոր փոխարինութիւնն ընել: Ահա այս է խնդիրն:

Ուրիշ կողմանէ, այսպիսի սխալ կարծիքներէ հեռի ըլլալու համար, բաւական է հասկնալ թէ ի՞նչ բանի կծառայէ դրամն:

Անոնք որ դրամն իրերու հարստութիւն կմբռնեն կսխալին ամեն ապրանք և ծառայութիւն միևնոյն նշանակութեամբ առնելով, և ասով ամեն մարդ հարուստ ընելով:

Բայց անոնք որ դիտեն թէ դրամը չէ ուրիշ բան այլ միայն չափ մը, և առաջնորդ հարստութեան, ճշմարտութեան մէջ կդտնուին: Երբ աշխարհիս ամեն բաներն, ապրանք և ծառայութիւն իրերու դրամ դործածուէր, արդէն կկարծուի թէ աւելի առատ ալիսի ըլլալ և ղանոնք գոհացներ: Ոչ, ստացուածոյ փոքրիկ կոտորակը անտեսելու, որք կրնան ծառայել

իբրեւ երկրորդական ապրանք, որոնց կվերաբերին բոլոր միւս-ները, մարդիկ պիտի զրկուէին այն դործիքէն, որով միջոցաւ վաճառականութեան կամ նիւթական աշխարհին մէջ ամենէն մեծ և ամենէն կարեւոր հեղափոխութիւնը կատարուած է, պիտի զրկուէին, աշխատութեան և վաճառականութեան ապահովութիւն տուող չարժառիթէն և ուժէն, պիտի զրկուէին միանդամայն ստացուածքի տէր ըլլալու փափաքէն դործադրութենէն, որ կչափուի, կատարուած աշխատութեան օգտակարութենէն:

Երբ ազգ և ժողովուրդ վայրենական վիճակը թողուլ սկսան, չուզեցին ապրանքն ապրանքին հետ փոխանակելու դրութիւնն: Որովհետեւ մարդկութեան ստորին վիճակին մէջն է որ դրամի դործածութիւնը ճանչցուած չէ:

Այսու ամենայնիւ չատերը կհարցնեն թէ տնտեսական դիտութիւնը չսովրեցնէր ապրանքն ապրանքի հետ փոխանակել: Անշուշտ այս է միակ նպատակը: Բայց երբ մէկն ապրանք մ'ունի ծախելու, կրնայ անմիջապէս մէկը դտնել, որ ճիշդ ծախածին հաւասար փոխանակելու այնպիսի ապրանքներ դտնել, որ ըլլայ և ունենայ մի և նոյն քանակութեամբ և որակութիւն: Ոչ անշուշտ, այս կարեւոր համաձայնութիւնն այս անակնկալ հանդիպումն, ուղուածին ամենէն խառն և ամենէն դժուարն է:

Դիցուք թէ երկրագործ մը 50 հեկ. ցորէն ունի. և պէտք ունի կամ կուզէ զդգ մը կոշիկ ծախու առնել, որով համար կոշկավաճառին կդիմէ, ցորէնը կցուցնէ կոշիկն առնելու. բայց կոշկակարը ցորէնի պէտք չունի. կամ թէ փոքը ինչ բան կուզէ նոյնպէս դիցուք թէ կոշկակարը բոլոր ցորէնն առնելով ատոր զդգ կոշիկ տալ փոխարէնն, ինչ պիտի ընէ երկրագործն, երբայ ասդին անդին կոշիկ ծախելու և փոխարէնն առնելու այնպիսի ապրանքներ որոնց բնաւ պէտք չունի: Արդարև, ապրանք ապրանքի հետ փոխանակելու յարմար և կարեւոր հանդիպումը չատ քիչ անդամ կպատահի թէ ծախողին և թէ ծախու առնողին մէջ տեղը:

Փոխանակութիւնն առանց դժուարութեան դործադրուելու համար, պէտք և կարեւոր է որ ապրանք ծախող մը փոխարէնն առնէ այնպիսի բան մը, ապրանք մը որ ընդհանուրէն

ընդունուած ըլլայ, որով կարող ըլլայ ուզածն ընել և առնել, ուզած, գացած և գտնուած տեղն, այսօր կամ վաղը մէկ ամսէն կամ մէկ տարիէն։

Ծախողին աղատութիւնը կ'ենդրէ թէ ծախած ապրանքին փոխարէն ընդունածը կարող ըլլայ իրեն ծառայել, ուզածն ընել, ոչ թէ նոյն վայրկեանին, այլ պէտք եղած ատեն և ուզածին չափ։ Ի՛նչ մեծ առաքերութիւն կայ, ուզածն առնելու համար չուկայ երթալ, ուր ամեն տեսակ ապրանք կը գտնուի բոլոր աշխարհիս համար։ Ի՛նչ մեծ առաքերութիւն, եթէ այն որ կուզէ ծախել վստահ է գտնել ծախու առնող մը ինչ որ ունի, և եթէ փոխարէն ընդունի այնպիսի ապրանք մը որ ամեն կողմ և ամենէն ընդունելի է, պահելը դիւրին, տեղափոխելու դժուարութիւն չունի. իր կամքէն կախում ունի զանի ուզածին չափ և ատեն պահել, վստահ ըլլալով որ երեւան հանած ատեն միշտ կրնայ գործածել և ընդունել տալ։ Անտարակոյս այս է դիւրութեան գաղտնիքն։

Դրամն այնպիսի ապրանք մ'է, որոյ պաշտօնն է ծախածին արժէքն յայտնել. կծառայէ ապրանքին կամ ծառայութեան դինն որոշել ինչպէս որ կուզուի, երբ կամ ուր որ ալ ըլլայ։

Այսպէս պատմութիւնը կսովրեցնէ, ինչպէս որ ներկայ իրականութիւնն ալ զանի կապացուցանէ, թէ ամեն բան իւրեւ դրամ կրնայ ծառայուիլ, քանի որ մարդիկ կհաճին։

Ռուսիոյ մէջ, այսպէս էր. ինչպէս Բառամէն պատմաբանը կպատմէ թէ Մօնկոլք ⁂. Ամերիկոյ մէջ ընդունելի, Զինեացիք՝ աչք, և այլն. իրրեւ դրամ կգործածէին։

Սոյն ժողովուրդք տեսնելով որ ապրանք ապրանքի հետ փոխանակութիւնն ընել, փոխանակ հարստութեան աղբիւր ըլլալու օրըստօրէ աղքատացնելու ձնռունդ է։

Փորձն ու ժամանակը սովրեցուցած է թէ աղդք և ժողովուրդք հարստացնելու միակ միջոցն է, նիւթական և բարոյական աշխատութեան օրինաւոր և արդար հատուցումը կամ փոխարինութիւն. երբ որ և է աշխատութեան մը փոխարութիւնն օրինաւոր և արդար է, աշխատողը ոչ միայն սիրով հոգով և մարմնով կաշխատի, այլ քաջալերուելով, աշխատութիւնն աւելի դերազանցելու չարժառիթ կունենայ.